Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների ժողովածուն բավարարում է ԲՈՀ-ի պահանջներին և ընդունելի է դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար: «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատուում» տպագրվում են 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հոդվածներ:

«Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» հանդեսն ունի մասնագիտական որոշակի ուղղվածություն՝ բանասիրություն, մանկավարժություն և մեթոդիկա, պատմագիտություն և իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, տնտեսագիտություն:

Մասնագիտական յուրաքանչյուր ուղղության հոդվածները տպագրության է արտոնում համապատասխան խմբագրական խորհուրդը: Գիտական հոդվածների ընդունման պահանջներն են՝

- կից ունեն համապատասխան ամբիոնի, միջամբիոնային ենթախորհուրդների երաշխավորությունը՝ ստորագրված ամբիոնի վարիչի, միջամբիոնային ենթախորհուրդների նախագահների կողմից.
- ունեն մասնագիտական գրախոսական՝ տրված գիտական խմբագրական խորհրդի կողմից.
- ունեն գիտական ղեկավարի կողմից տրված երաշխավորություն կամ գրախոս ական
- ունեն հղում-ծանոթագրություններ և (կամ) օգտագործած գրականության ցանկ.
- ունեն նշված լեզուներով ամփոփումներ և բանալի բառեր.
- պարունակում են անհրաժեշտ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին.
- մեթոդական բնույթի հոդվածները պետք է ունենան նվազագույնը կես մամուլ /8 համակարգչային ստանդարտ էջ/ ծավալ:

Գիտական աշխատանքը կարող է ուղարկվել արտաքին գրախոսման: Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով (կրիչով), տառատեսակը՝ Arial Armenian (հայերեն), Times New Roman (ռուսերեն և անգլերեն լեզուներով), տառաչափը՝ 12, տողահեռավորությունը՝ 1,15: